

## Կորոնավիրուսի համավարակին (COVID-19) Կանադայի տնտեսական արձագանքման ծրագիր. ֆինանսական նպաստների ամփոփագիր \*

Օժանդակության տեսակները	Օժանդակության համառոտ նկարագրություն	Օժանդակության գումարը	Ի՞նչ կարող եմ անել՝ օժանդակությունն ստանալու համար	Լրացուցիչ տեղեկություններ
<p style="text-align: center;"><b>Կանադայի արտակարգ իրավիճակներին արձագանքման նպաստ (ԿԱԻԱՆ/CERB)</b></p>	<p>Այս հարկվող նպաստը կտրամադրի ամսական 2000 դոլար մինչև չորս ամիս՝ կորոնավիրուսի համավարակի (COVID-19) հետևանքով իրենց եկամուտը կորցնող աշխատողների համար:</p> <p>ԿԱԻԱՆ/CERB-ը կտրվի հետևյալ անձանց.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Աշխատողներ, ովքեր պետք է դադարեցնեն աշխատանքը կորոնավիրուսի համավարակի պատճառով և չունեն վճարովի արձակուրդի կամ այլ եկամուտների աջակցության հնարավորություն:</li> <li>• Աշխատողներ, ովքեր հիվանդ են, կարանտինացված կամ ինամում են որևէ մեկին, ով հիվանդ է COVID-19-ով:</li> <li>• Աշխատող ծնողները, ովքեր պետք է մնան տանը առանց վարձատրվելու՝ հոգ տանելու այն երեխաներին, ովքեր հիվանդ են կամ ունեն լրացուցիչ խնամքի կարիք՝ դպրոցի և ցերեկային խնամքի կենտրոնի փակման պատճառով:</li> <li>• Աշխատողներ, ովքեր դեռ աշխատանք ունեն, բայց չեն վարձատրվում, քանի որ ներկայումս բավարար աշխատանք չկա, և նրանց զործատուն նրանց խնդրել է</li> </ul>	<p style="text-align: center;">Ամսական 2000 դոլար</p>	<p>Կանադայի արտակարգ իրավիճակներին արձագանքման նպաստը հասանելի կլինի անվտանգ վեբ պորտալի միջոցով՝ սկսած ապրիլի սկզբից:</p>	<p style="text-align: center;"><a href="#">Լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք այստեղ:</a></p>

	<p>չգալ աշխատանքի:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Օրավարձով, ժամավարձով վարձատրվող և ինքնագբաղված անձինք, ներառյալ պայմանագրային աշխատողներ, ովքեր այլապես իրավասու չէին լինի ունենալու գբաղվածության ապահովագրություն:</li> </ul>			
<b>Հիփոթեքային աջակցություն</b>	<p>Կանադական բանկերը պարտավորվել են անհատական մոտեցում ցուցաբերել իրենց հաճախորդներին՝ գտնելու լուծումներ, որոնք կօգնեն նրանց կառավարել կորոնավիրուսի համավարակի հետևանքով առաջացած դժվարությունները: Կանադացիները, ովքեր տուժել են կորոնավիրուսի համավարակից և արդյունքում ունենում են ֆինանսական դժվարություններ, պետք է կապվեն իրենց ֆինանսական հաստատության հետ՝ հիփոթեքային վարկային պարտավորությունների կատարումը ճկուն կերպով հետաձգելու համար: Դա թույլ կտա օգտվել ճկուն պայմաններից նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:</p>	Կախված վարկի գումարի չափից	Դիմեք ձեզ հիփոթեքային վարկ տրամադրած բանկին	<a href="#">Լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք այստեղ:</a>
<b>Կանադայի՝ երեխաներին տրվող նպաստի ավելացում</b>	<p>Կանադայի կառավարությունը մեկ երեխային տրամադրում է հավելյալ 300 դոլար՝ Կանադայի՝ երեխաներին տրվող նպաստի (CCB) միջոցով՝ 2019-20 թվականներին: Սա կնշանակի մոտավորապես 550 դոլար ավելի՝ միջին ընտանիքի համար: Այս նպաստը կտրամադրվի որպես մայիսին նախատեսված Կանադայի՝ երեխաներին տրվող նպաստի (CCB) վճարման մաս:</p>	Հավելյալ 300 դոլար՝ մեկ երեխային 550 դոլար ավելի՝ միջին չափի ընտանիքին	Անհրաժեշտություն չկա, որ ներկայումս Կանադայի՝ երեխաներին տրվող նպաստ (CCB) ստացող ընտանիքները դիմեն: Դուք կարող եք ակնկալել հավելյալ վճարումն ստանալ մայիսին:	<a href="#">Լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք այստեղ:</a>
<b>Կանադայի ուսանողական վարկերի մարման</b>	<p>Մարտի 30-ից սկսած Կանադայի կառավարությունը սահմանում է տոկոսագումարներից ազատված վեցամսյա ժամկետ Կանադայի ուսանողական վարկերի</p>	Կախված վարկի գումարի չափից	Օգնությունը ստանալու համար հարկավոր չէ որևէ	<a href="#">Լրացուցիչ տեղեկությունների</a>

<b>հետաձգում</b>	մարման համար՝ ուսանողական վարկերի բոլոր վարկառուների համար: Վճարում չի պահանջվի, և այս ժամանակահատվածում տոկոսագումարներ չեն կուտակվի:		բան անել: Դուք կարող եք դադարեցնել վճարումը վեց ամիս՝ սկսած մարտի 30-ից:	<a href="#">համար սեղմեք այստեղ:</a>
<b>Հատուկ ապրանքներ և ծառայությունների հարկային վարկի վճարում</b>	Կանադայի կառավարությունը ապրանքների և ծառայությունների հարկային վարկի միջոցով ցածր և համեստ եկամուտ ունեցող ընտանիքներին տրամադրում է մեկանգամյա հատուկ վճարում մայիսի սկզբին:	Միայնակ անձանց՝ մոտավորապես 400 դոլար, իսկ զույգերին՝ մոտավորապես 600 դոլար:	Այս վճարման համար դիմելու կարիք չկա: Եթե բավարարում եք պայմանները, ապա կստանաք ինքնաբերաբար:	<a href="#">Լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք այստեղ:</a>
<b>Հավելյալ ժամանակ՝ եկամտահարկի հայտարարագրեր ներկայացնելու համար</b>	<p>Կանադայի կառավարությունը հետաձգում է ֆիզիկական անձանց 2019 թվականի հարկային հայտարարագրերի ներկայացման ժամկետները:</p> <p>Անհատների համար (ովքեր հավատարմագրային կառավարիչներ չեն) հարկային հայտարարագրերի ներկայացման ժամկետը հետաձգվում է մինչև 2020 թվականի հունիսի 1-ը:</p> <p>Դա նաև թույլ կտա վճարման ելթակա ցանկացած նոր եկամտահարկեր կամ մասնակի վճարումներ հետաձգել մինչև 2020 թվականի օգոստոսի 31-ից հետո՝ առանց տոկոսագումար կամ տույժեր առաջացնելու:</p>		Դիմելու համար հարկավոր չէ որևէ բան անել:	<a href="#">Լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք այստեղ:</a>

\* These financial supports are provided by the federal government at this moment and kindly check Canadian government's website for the latest announcements. For other supports offered by provincial and municipal governments, check the media outlets of your particular province or city.

\* This info is adopted from a list compiled by habesha.help@gmail.com; <https://ethioerisupport.webnode.com/>